ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE46-D089-4337-B23C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

գործ թիվ ԵԴ2/4094/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Աննա Ճիլաջյանի

2026 թվականի ապրիլի 18-ին քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) քննարկելով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ «ՄԵԴՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Տ

«ՄԵԴՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Իսահակյանի «Մեդմարկետ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.03.2026 թվականի թիվ N0421 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 14.04.2026 թվականին, ժամը 14:59-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 14.04.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:31-ին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 15.04.2026 թվականը:

Դատարանի 18.04.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել են ապացույցներ և նշանակվել է դատական ակտի հրապարակման օր:

Միաժամանակ հայցվորի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ՝ խնդրելով՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել 30.03.2026 թվականին «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Իսահակյանի կողմից ընդունված որոշման հիմքով «Մեդմարկետ» ՍՊ ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում իր նախաձեռնությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոցներն են՝

1) պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը.

2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը.

3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը.

4) պատասխանողին կամ այլ անձանց վեճի առարկային վերաբերող որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելը.

5) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը.

6) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը.

7) օրենքով նախատեսված հայցի ապահովման այլ միջոցներ:

2. Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց:

3. Հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:

4. Կիրառվող հայցի ապահովման միջոցը չպետք է հանգեցնի իրավաբանական անձի գործունեության իրականացման փաստացի անհնարինության կամ նրա գործունեության համար ստեղծի էական խոչընդոտներ կամ հանգեցնի իրավաբանական անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման: «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գնումների հետ կապված վեճերով, ինչպես նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հետ կապված վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի գնման գործընթացի, գնման պայմանագրի կնքման կամ կատարման, մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի կամ ՊՄԳ ծրագրի իրականացման կասեցմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել առաջին ատյանի դատարան հայցադիմումի հետ կամ մինչև գործով դատաքննության ավարտը: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կարող է շարադրվել հայցադիմումում:
2. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին:

Սույն գործով ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցվորի ներկայացուցիչը փորձել է հիմնավորել այն փաստարկներով, որ Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պարագայում «ՄԵԴՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությունը հայցի ապահովման միջնորդությունը չբավարարելու դեպքում մինչև սույն գործով դատական ակտ կայացնելը

կարող է էական վնասներ կրել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Դատարանը արձանագրում է, որ վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմինը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում մասնակցին չի ներառում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Սույն դեպքում **«Մեդմարկետ» ՍՊ ընկերության** կողմից հայցադիմում է ներկայացվել **«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Ա. Իսահակյանի «Մեդմարկետ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 30.03.2026 թվականի թիվ N0421 որոշումը** վիճարկելու պահանջի մասին, որը Դատարանի կողմից ընդունվել է վարույթ և օրենքով սահմանված կարգով տրամադրվելու է գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը), որն էլ Դատարանի նշված որոշումը ստանալուց հետո **«Մեդմարկետ» ՍՊ ընկերությանը** չի ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Որպես հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ նշվել է, որ Հայցվորը գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պարագայում **«Մեդմարկետ» ՍՊ ընկերությունը** կկրի էական վնասներ, սակայն չի հիմնավորել թե ինչ ձևով է կրելու ենթադրյալ վնասները:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական նորմերը և դրանք համադրելով հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումների հետ՝ Դատարանն գտնում է, որ հայցվող հայցի ապահովման միջոցի չկիրառման արդյունքում վրա հասնող հետևանքների վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված պնդումներն ունեն ենթադրական բնույթ, իսկ հնարավոր հետևանքների առաջացման հնարավորության վերաբերյալ հայցվորի կասկածները կամ հավանական հետևությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցներ կիրառելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը լրիվ կամ մասնակի մերժվում է, եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-132-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ 361-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

3. Որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2026.04.18 20:54:36 AMT